Տեղեկանք
«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի փոփոխվող և լրացվող հոդվածի վերաբերյալ

Հոդված 44. Հանրային և մասնավոր մուլտիպլեքսում գործող Հեռարձակողները

1. Կարգավորող պետական մարմինը մրցույթները հայտարարում է հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման սլոթի օգտագործման լիցենզիայի ժամկետը լրանալու, նոր կամ ազատ սլոթ առաջանալու դեպքում:

2. Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիա կարող են ստանալ միայն Հայաստանի Հանրապետությունում գործող Հեռարձակողները, եթե այլ բան նախատեսված չէ մինչև սույն դրույթն ուժի մեջ մտնելը կնքված միջազգային պայմանագրով:

3. Հանրային մուլտիպլեքսում ներառված բոլոր տեսալսողական ծրագրերն իրենց վերգետնյա հաճախականությունների սփռման տարածքներին համապատասխան տարածման իրավունքով անվճար տրամադրվում են ցանցային օպերատորներին: Ցանցային օպերատորները պարտավոր են տարածել իրենց՝ անվճար տարածման իրավունքով տրամադրված տեսալսողական ծրագրերը՝ : ~~Ընդ որում, ծրագրերի հերթականությունը պետք է սկսվի Հանրային հեռարձակողների ծրագրերից:~~ ***կախված վերգետնյա հաճախականությունների սփռման տարածքից, նույն հերթականությամբ»:***

3.1. Հանրային մուլտիպլեքսում ներառված բոլոր տեսալսողական ծրագրերը եթեր են հեռարձակվում հետևյալ հերթականությամբ՝

1) ***Հանրային հեռարձակողների տեսալսողական ծրագրերը, բացառությամբ՝ սլոթի օգտագործման լիցենզիայով գործող Հանրային Հեռարձակողների,***
2) ***հանրապետական սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը,***
3) ***մայրաքաղաքային սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը,***
4) ***մարզային սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը,***
5) ***սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հանրային հեռարձակողները,***

6) ***միջպետական պայմանագրի հիման վրա Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը,***
7) ***հեղինակազորված Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը:***

4. Սլոթի օգտագործման լիցենզիայի ժամկետը լրանալու հիմքով մրցույթը հայտարարվում է այդ լիցենզիայի գործողության ժամկետը լրանալուց չորս ամիս առաջ:

5. Հանրային մուլտիպլեքսում ազատ սլոթ առաջանալու դեպքում կարգավորող պետական մարմինը մեկամսյա ժամկետում հայտարարում է մրցույթ:

6. Հանրային մուլտիպլեքս ցանցում նոր սլոթ առաջանալու դեպքում Կառավարության լիազոր մարմինը այդ մասին տեղեկացնում է կարգավորող պետական մարմնին, որը մեկամսյա ժամկետում հայտարարում է սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթ:

7. Թեմատիկ ուղղվածության չափորոշիչները, դրանց հասկացությունները սահմանվում են կարգավորող պետական մարմնի որոշմամբ:

8. Թվային հեռարձակման տեխնիկական հնարավորություն առաջանալու դեպքում լսողական ծրագրեր հեռարձակողները կարող են ներառվել մուլտիպլեքսում՝ իրենց լիցենզիայի պայմաններին համապատասխան:

9. Մասնավոր մուլտիպլեքսում գործող Հեռարձակողները տեսալսողական ծրագրերի հեռարձակումն իրականացնում են մասնավոր մուլտիպլեքս օպերատորի տրամադրած սլոթի միջոցով: